ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 326, ֆաքս՝ (374 10) 540 603
Էլ.փոստ՝ scwe@scws.am, scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 326, fax: (374 10) 540 603
E -mail: scwe@scws.am, scws@scws.am,

<<____>> _____ 2015թ. N _____

Ձեր _____ 2015թ. N _____

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գրանցված մասնակիցներին

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում «ՀՀԳՆՋՏՊԿ – ՇՀԱՊՁԲ - 11/3 -15/8»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2015 թվականի փետրվարի 10-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Արայիկ Մնացականյանը:

Հայտերը կբացվեն 2015 թվականի փետրվարի 10-ին, ժամը 11:00:

Գնման առարկա է հանդիսանում կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

- «Պիտանելիության չափորոշիչ».

ա. գնման գործընթացին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

- «Ֆինանսական չափորոշիչ»

բ. Գնային առաջարկ (Հավելված N 1.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՀՀԳՆՋՏՊԿ – ՇՀԱՊՁԲ - 11/3 -15/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք հայտի օրինակելի ձևը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի էլեկտրոնային փոստի հասցեն՝ scws@scws.am:

Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Ա. Մնացականյան
54.02.29

Հավելված 1

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

<<ՀՀԳՆՋՏՊԿ- ՇՀԱՊՁԲ-11/3-15/8>> ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից N <<ՀՀԳՆՋՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8>> ծածկագրով

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1.1

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

<<ՀՀԳՆՁՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8>> ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N <<ՀՀԳՆՁՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8>> ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7=5+6 կամ 10X4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>					
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>					
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>					
…	…					
…	…					

**5-րդ և 8-րդ սյունյակներում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

*** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 6-րդ և 9-րդ սյունակներում:*

<u>Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/:</u>

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/3-15/8>>

ք. Երևան << >> << >> 2015թ.

<<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն>>, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մկրտումյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<_____>>-ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման գնման ժամանակացույցով համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է ոչ պատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով ոչ պատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է ոչ պատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված Արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը Արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի, տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ <Գնումների մասին> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չեն կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011567378 հվհհ 02555816 Կոմիտեի աշխատակազմի ղեկավար _____ Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Կ. Տ.	---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
<< >> << >> 2015թ. կնքված
<<ՀՀԳՆՋՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2015թ. անհրաժեշտ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման

Հ/Հ	Ապրանքի*			
	անվանումը	***բնութագիրը***	***չափման միավորը***	***քանակը***
1.	Հաշվասարք, գրասենյակային	12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ	26
2.	գնդիկավոր գրիչ	Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի:	հատ	228
3.	գրիչ գելային	Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, գելային:	հատ	206
4.	մատիտներ, գրաֆիտե միջուկով, հասարակ	Հասարակ, սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ:	հատ	200
5.	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ:	հատ	75
6.	Սոսնձամատիտ, գրասենյակային	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար:	հատ	175
7.	Սրիչ սովորական	Սրիչ գրաֆիտե մատիտի համար	հատ	10
8.	կոճգամ, պլաստմասե գլխիկով	Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով:	տուփ	23
9.	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար,արագակալներին ամրացնելու հնարավորություն:	հատ	5000
10.	թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	150
11.	Կարիչ, մինչև 20 թերթի համար	Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	26
12.	Կարիչ, մինչև 20-50 թերթի համար	Գրասենյակային կարիչ, 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	28
13.	ապակարիչներ	Գրասենյակային ապակարիչ՝ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար:	հատ	10
14.	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2, (210X297) մմ.:	տուփ	460
15.	Թուղթ ֆաքսի, ժապավեն	Ֆաքսի թուղթ՝ գլանափաթեթված, լայնությունը՝ 210մմ, երկարությունը՝ 30մ, 210մմx12մմ, (20-30) մ կամ այլ:	հատ	10
16.	բացիկներ	Ամանորի շնորհավորական բացիկ ծրարով, Ամանորին համահունչ դիզայնով	հատ	100
17.	Նամակի ծրար, A5 ձևաչափի համար	Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևի:	հատ	500
18.	Ծրար մեծ, A4 ձևաչափի համար	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող	հատ	500
19.	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս:	տուփ	120

20.	Թուղթ նշումների, տրցակներով	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով:	տուփ	100
21.	Ստվարաթուղթ, թերթով	Թուղթ Ա մակնիշի (մատիտով, տուշով և ջրաներկով գծագրագրաֆիկական աշխատանք կատարելու համար), 1 մ2 մակերեսով թղթի զանգվածը՝ 200 գ, (610x860) մմ չափերի:	հատ	10
22.	Օրացույց, սեղանի	Սեղանի օրացույց նշումների համար, տարբեր չափերի,պատվանդանով, գունավոր տպագրությամբ:	հատ	30

*Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումն իրականացնում է մատակարարը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011567378
հվհհ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար
_____ Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Կ. Տ.

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<< >> << >> 2015թ. կնքված
N ՀՀԳՆՔՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2015թ. անհրաժեշտ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	Հաշվասարք, գրասենյակային	հատ		10		0		16		0		26	
2.	գնդիկավոր գրիչ	հատ		50		50		128		0		228	
3.	գելային գրիչ	հատ		206		0		0		0		206	
4.	մատիտներ, գրաֆիտե միջուկով, հասարակ	հատ		100		0		0		100		200	
5.	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	հատ		25		50		0		0		75	
6.	Սոսնձամատիտ, գրասենյակային	հատ		50		50		75		0		175	
7.	սրիչ, սովորական	հատ		10		0		0		0		10	
8.	կոճգամ, պլաստմասե գլխիկով	տուփ		23		0		0		0		23	
9.	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	հատ		1000		1000		2000		1000		5000	
10.	թղթապանակ, կոշտ կազմով	հատ		50		50		25		25		150	
11.	Կարիչ, մինչև 20 թերթի համար	հատ		13		13		0		0		26	
12.	Կարիչ, մինչև 20-50 թերթի համար	հատ		14		14		0		0		28	
13.	ապակարիչներ	հատ		10		0		0		0		10	
14.	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	տուփ		0		260		200		0		460	
15.	թուղթ, ֆաքսի, ժապավեն	հատ		10		0		0		0		10	
16.	բացիկներ	հատ		0		0		100		0		100	
17.	Նամակի ծրար, A5 ձևաչափի համար	հատ		100		100		200		100		500	
18.	Ծրար մեծ, A4 ձևաչափի համար	հատ		100		100		200		100		500	
19.	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	տուփ		60		0		60		0		120	
20	Թուղթ նշումների, տրցակներով	տուփ		25		25		25		25		100	
21.	Ստվարաթուղթ, թերթով	հատ		10		0		0		0		10	
22.	Օրացույց, սեղանի	հատ		30		0		0		0		30	

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011567378 հվհհ 02555816 Կոմիտեի աշխատակազմի ղեկավար _____ Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Կ. Տ.	---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
<< >> << >> 2015թ. կնքված
N ՀՀԳՆՋՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

2015թ. անհրաժեշտ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Բյուջետային տնտեսագիտական դասարագմանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում												Ընդամենը Տարի
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.	Հաշվասարք, գրասենյակային	**4261**	38.5%.			38.5%.			100%.			100%.			100%
2.	գնդիկավոր գրիչ	**4261**	22%.			44%.			100%.			100%.			100%
3.	գելային գրիչ	**4261**	100%.			100%.			100%.			100%.			100%
4.	մատիտներ, գրաֆիտե միջուկով, հասարակ	**4261**	50%.			50%.			50%..			100%.			100%
5.	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	**4261**	33%.			100%.			100%.			100%.			100%
6.	Սոսնձամատիտ, գրասենյակային	**4261**	30%.			60%.			100%.			100%.			100%
7.	սրիչ, սովորական	**4261**	100%.			100%.			100%.			100%.			100%
8.	կոճգամ, պլաստմասե գլխիկով	**4261**	100%.			100%.			100%.			100%.			100%
9.	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	**4261**	20%.			40%.			80%.			100%.			100%
10.	թղթապանակ, կոշտ կազմով	**4261**	33%.			66%.			85%.			100%.			100%
11.	Կարիչ, մինչև 20 թերթի համար	**4261**	50%.			100%.			100%.			100%.			100%
12.	Կարիչ, մինչև 20-50 թերթի համար	**4261**	50%.			100%.			100%.			100%.			100%
13.	ապակարիչներ	**4261**	100%.			100%.			100%.			100%.			100%
14.	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	**4261**				55%.			100%.			100%.			100%
15.	թուղթ, ֆաքսի, ժապավեն	**4261**	100%.			100%.			100%.			100%.			100%
16.	բացիկներ	**4261**							100%.			100%.			100%
17.	Նամակի ծրար, A5 ձևաչափի համար	**4261**	20%.			40%.			80%.			100%.			100%
18.	Ծրար մեծ, A4 ձևաչափի համար	**4261**	20%.			40%.			80%.			100%.			0%
19.	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	**4261**	50%.			50%.			100%.			100%.			100%
20.	Թուղթ նշումների, տրցակներով	**4261**	25%.			50%.			75%.			100%.			100%

21.	Ստվարաթուղթ, թերթով	**4261**	100%.	100%.	100%.	100%.	100%
22.	Օրացույց, սեղանի	**4261**	100%.	100%.	100%.	100%.	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական
կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
հ/հ 900011567378
հվհհ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

_____ Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Կ. Տ.

ՎԱՃԱՌՈՂ

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
<< >> << >> 2015թ. կնքված
N ՀՀԳՆՔՏՊԿ–ՇՀԱՊՁԲ-11/3-15/8
ծածկագրով գնման պայմանագրի

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 20___թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____»:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» _____ 20___թ

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդը, ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս _____ _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «___» _____ 20___թ.-ից «___» _____ 20___թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց	Մատակարարումները ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ----------

ք. Երևան <<_____>>_____
2015թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման>> N <<---------->> ծածկագրով գնման ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման>> N --------- գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ._____-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Մասնակցի անվանումը (անունը)

(հասցեն)

(բանկ)

Հ/Հ ----------

ՀՎՀՀ ----------

(Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

(ստորագրություն)

(Մասնակցի գլխավոր հաշվապահի (հաշվապահի), անուն, ազգանուն)

(ստորագրություն)